ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenismer@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1.1 կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիս համայնքի 2020թ.համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)բյուջեի եկամտային մասի 47-01-00 գործառնական դասակարգման (պետության կողմից պատվիրակված լիազորություններ) ծրագրում ավելացնել 38.77 հ/դ եկամուտ (պայմանագրի փոփոխության հետ կապված),

2)բյուջեի ծախսային մասում ավելացնել 01-03-01 (ՔԿԱԳ-ի պահպանման ծախսեր) գործառնական դասակարգման 5122 տնտեսագիտական հոդվածին 38.77 հ/դ: Միաժամանակ նույն գործառնական դասակարգման 4212 տնտեսագիտական հոդվածից պակասեցնել 45.0 հ/դ, 4239 տնտեսագիտական հոդվածից պակասեցնել 50.0 հ/դ այն ավելացնելով 4252 տնտեսագիտական հոդվածին 10.0 հ/դ, 4261 տնտեսագիտական հոդվածին 10.0 հ/դ և 5122 տնտեսագիտական հոդվածին 75.0 հ/դ:

2. Կորոնավիրուսի դեմ պայքարի միջոցառումների անհրաժեշտությունից ելնելով թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի վարչական բյուջեի պահուստային միջոցներից 500,0 հ/դ օգտագործելու աղտահանիչ, պահպանիչ, հիգիենիկ նյութերի ձեռք բերման նպատակով, որը կօգտագործվի համայնքապետարանի աշխատակիցների պաշտպանվածության և համայնքում հակահամաճարակային միջոցառումներ կազմակերպելու համար;

3. Արտակարգ դրության պայմաններում ժամկետի երկարաձգմամբ և ավագանու արտահերթ նիստ հրավիրելու անհնարինությամբ պայմանավորված (արտակարգ դրության ժամկետի երկարացման պարագայում) թույլատրել համայնքի ղեկավարին ևս 300,0 հ/դ օգտագործել նշված միջոցառումների իրականացման համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻՄՈՆ

ԽՉԵՅԱՆ ԳՐԻՇԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ

ՇԱԲՈՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ

Կ. Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ՄԵԼՔՈՆՅԱՆ